ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/241

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Ս. Սուքիասյանի և Ա. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 08.06.2022թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8878-2022 գրությամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 06.05.2022թ. թիվ 39/02-15-331 գրության հիման վրա, 17.05.2022թ. թիվ 26/26-1/8878-2022 գրությամբ նախաձեռնել է «Ֆոտոն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրություններով, հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Բողոքներ քննող անձի կողմից համապատասխան ծանուցումը ստացվել է 03.06.2022 թվականին:

Ընթացակարգի նախաձեռնման հիմք է հանդիսացել Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 06.05.2022թ. թիվ 39/02-15-331 գրությունը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն առարկում է նախաձեռնված ընթացակարգի դեմ և գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև երբ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը:

Վերոգրյալով պայմանավորված, ցանկանում ենք հայտնել, որ մասնակցել ենք ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով էլ. աճուրդին և մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն՝ 1, 3, 5, 7 և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել ենք հաղթող:

Պատվիրատուն 18.04.2022 թվականին eauction@armeps.am համակարգի միջոցով ընկերությանն է ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը, որակավորման և պայմանագրի ապահովման տուժանքներ ներկայացնելու առաջարկը:

Պայմանագիր կնքելու առաջարկին ընկերությունը անմիջապես արձագանքել է, ընդունել է համակարգի միջոցով պայմանագիր կնքելու առաջարկը և հաստատել է համակարգի միջոցով, քանի որ ի սկզբանե «Ֆոտոն» ՍՊԸ-ն մտադրություն է ունեցել կնքել և կատարել մատակարարումներ:

Հավելում ենք, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն 25.04.2022թ-ին էլէկտրոնային տարբերակով ստորագրել և կցել ու eauction.armeps.am համակարգ ստորագրված պայմանագիրը:

Այնուհետև «Ֆոտոն» ՍՊԸ-ն փորձել է կապ հաստատել մետրոպոլիտենի գնումների համակարգողի հետ, որպեսզի կարողանա ուղեկցող գրությամբ առձեռն ներկայացնի որակավորման և պայմանագրի ապահովման տուժանքները, քանի որ այդպես է սահմանված հրավերով: Ինչու է փորձել կապ հաստատել, այնուհետև նոր ներկայացնել փաստաթղթերը, քանի որ պայմանագրում նշված չի եղել, որ Գևորգ Ավետիսյանը հանդիսանում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ, որպեսզի ուղեկցող գրությանը մեջ ներառվեր, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ ունի անվտանգության պահակակետ և առանց համապատասխան թույլտվության ոչ ոք իրավունք չունի մուտք մոտրոպոլիտենի ադմինիստրատիվ մասնաշենք, այդ իսկ պատճառով է ընկերությունը փորձել կապնվել համակարգողի հետ: Սակայն հրավերում նշված հեռախոսահամարով մի քանի անագամ զանգ կատարելուց և զանգերին պատասխան չստանալուց հետո այլ ընկերության միջոցով ճշտելով աշխատակցի բջջային հեռախոսահամարը, կապ ենք հաստատել համակարգողի՝ Գայանե Կյատիկյանի հետ, հեռախոսազանգի ընթացքում նա մեզ հայտնել է, որ այլևս չի աշխատում Երևանի մետրոպոլիտենում և ոչ մի հարցով չի կարող օգնել, իսկ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հատ կապ հաստատելու համար պետք է զանգ կատարենք հրավերով նշված հեռախոսահամարով:

Բազմաթիվ անպատասխան զանգերից հետո, երբ հասկացել ենք, որ այլևս հնարավոր չէ սպասել, ծանուցմամբ նախատեսված ժամկետի վերջին օրը, մեր ընկերության ներկայացուցիչը ուղեկցող գրությունը լրացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները վերցրել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի պաշտոնական կայքից և համապատասխան ապահովումների հետ միասին փորձել է ներկայացնել Երևանի մետրոպոլիտեն, սակայն այդ օրը Երևան քաղաքում տեղի էին ունենում ցույցեր իսկ «Ֆոտոն» ՍՊԸ-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ հասնելու համար Սայաթ Նովա պողոտայով դեպի Բաղրամյան պողոտա ընթանալու ժամանակ հայտնվել ենք ֆորսմաժորային իրավիճակում՝ այդ օրը մայիսի 2-ն էր՝ դիմադրություն շարժման հանրահավաքի առաջին օրը, երբ անանցանելի էր Ֆրանսիայի հրապարակը և հարակից փողոցները, և նույնիսկ մեքենա կայանելն է անհնար եղել և մեր աշխատակիցը մինչև աշխատանքային օրվա ավարտը ոտքով չի

կարողացել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ հանձնել փաստաթղթերը:

Ցանկանում ենք նաև հավելել, որ 05.05.2022թ.-ին մեր ընկերության աշխատակցի կողմից տուժանքները ներկայացնելու ժամանակ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ ՓԲԸ-ի նոր աշխատակիցը՝ Անահիտ Առաքելյանը մեր աշխատակցին հայտնել է, որ մեր ընկերություն պայմանագիրը էլեկտրոնային հաստատված eauction.armeps.am համակարգում նույնպես բացակայում է, հակառակ դեպքում պայմանագրին ընթացք կտրվեր: Սակայն աշխատակիցը անտեղյակ է եղել մեր ընկերության կողմից 25.04.2022թ.-ին էլեկտրոնային տարբերակով հաստատված պայմանգիրը բեռնել է eauction.armeps.am համակարգ:

Կից ներկայացնում ենք «Ֆոտոն» ՍՊԸ-ի աշխատակցի և ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ ՓԲԸ-ի նախկին գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Կյատիկյանի հետ 25.04.2022թ. (12:30:15)-ին կատարված հեռախոսազանգի քաղվածքը:

Հավելում ենք նաև, որ սույն թվականի հունիսի 6-ին Գայանե Կյատիկյանին խնդրեցինք, որ նա մեզ տրամադրի գրություն, որտեղ նա իր հաստատում է, որ մեր ընկերությունը փորձել է կապ հաստատել ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ ՓԲԸ-ի հետ: Սակայն նա հեռախոսազրույցի ժամանակ նշեց, որ համաձայն է մեր ներկայացրած փաստերին, սակայն ինքը հրաժարվում է տրամադրել որևէ գրություն, բայց համաձայն է որ ՍՑ-ՆԳ-2022/241 նիստին ներկայացնենք 25.04.2022թ. -ին կատարված հեռախոսազանգի քաղվածքը, որտեղ հստակ երևում է իրեն հետախոսահամարը և այդ համարը ՀՀ Ֆինասների նախարարության համապատասխան բաժնում նշված է որպես իրեն հեռախոսահամար՝ +37491-49-83-10:

Սա է ամբողջ եղելությունը: Եվս մեկ անգամ ցանկանում ենք նշել, որ պայմանագիր չկնքելու, ապահովումներ չներկայացնելու և մատակարարումներ չիրականացնելու ցանկություն չի ունեցել ընկերությունը, այլ հակառակը, հատկապես նաև հաշվի առնելով այն, որ ապահովումները ներկայացվելու էին միակողմանի հաստատված տուժանքի տեսքով, և այն դիտավորյալ չներկայացնելու պատճառ չէր կարող ունենալ ընկերությունը:

Ի լրումն այս ամենի ցանկանում ենք հայտնել, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ–ի կողմից ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով հրապարկված հրավերի «8» չափաբաժիններից «5» չափաբաժին շահել է մեր

ընկերությունը՝ 1014916.80 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, իսկ «1» չափաբաժին շահել է «Առնատար» ՍՊԸ-ն, որը նույնպես կանգնած սև ցուցակում հայտնվելու վտանգի շեմին:

Ակամայից հարց է առաջանում, մի՞ թե այդպես է պատվիրատուն խրախուսում մրցակցության մեծացմանը, որի առաջնային նպատակը Երևանի մետրոպոլիտենի բյուջեի տնտեսումը պետք է լիներ:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն տվայլ ընթացակարգը չեղյալ համարելուց հետ 07.06.2022թ.-ին հրապարակել է նոր ընթացակարգ, որտեղ ներառված են նախորդ ընթացակարգի ապրանքները և «Ֆոտոն» ՍՊԸ – այս ընթացակարգին նույնպես մասնակցել է:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՍՑ-ՆԳ-2022/241 ծածկագրով նախաձեռնված ընթացակարգը մերժել և «Ֆոտոն» ՍՊԸ-ին չներառել ցուցակում»

Ի լրումն վերը նշված դիրքորոշման Ընկերությունը հայտնել է հետևյալը.

««Ֆոտոն» ՍՊԸ-ն առարկում է նախաձեռնված ընթացակարգի դեմ և ի լրումն նախորդ առարկության ներկայացնում հետևյալը.

Հայտնում ենք Ձեզ, որ 08.06.2022թ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ֆոտոն» ՍՊԸ-ին ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2022/241 ծածկագրով ընթացակարգին մեր ընկերությունը պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովման տուժանքները չէր ներկայացրել, քանի որ բնօրինակ փաստաթղթերը 05.05.2022թ.-ին ներկայացրել էինք «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ:

Մեր ընկերությունը վերը նշված փաստաթղթերը ամենևին էլ միտումնավոր չի ուշացրել, այդ ամենի մասին մենք ներկայացրել էինք 07.08.2022թ.-ին ներկայացված առարկության մեջ: Ներկայացված փաստի հետ կապված, ՍՑ-ՆԳ-2022/241 ծածկագրով ընթացակարգի նիստի ժամանակ Ձեր կողմից ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով էլեկրոնային աճուրդի հրավերում նշված հեռախոսահամարով՝ 060460101(9807) կատարված զանգերին նույնպես պատասխան չեղան: Իսկ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ունի անվտանգության պահակակետ և առանց համապատասխան թույլտվության ոչ ոք իրավունք չունի մուտք գործելու մետրոպոլիտենի

ադմինիստրատիվ մասնաշենք, այդ իսկ պատճառով մինչև պայմանագրի ներկայացման վերջնաժամկետը՝ 02.05.2022թ.-ն հնարավոր չի եղել ներկայացնել փաստաթղերը:

Քանի որ Էլեկրոնային աճուրդի հրավերում նշված հեռախոսահամարով՝ 060460101(9807) զանգերին պատասխանել է «ինքնապատասխանիչը», որի պատասխանը լսվել է 16-25 վայրկյանի ընթացքում, որը հստակ երևում է պայմանագրի ներկայացման համար սահմանված ժամկետում՝ 19.04.2022թ.-02.05.2022թ.–ն կատարված զանգերի քաղվածքներում:

Հավելում ենք, որ, «Ֆոտոն» ՍՊԸ-ն մասնակցելով ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով էլ. աճուրդին, մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն՝ 1, 3, 5, 7 և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող, և մինչև պայմանագրի ներկայացնելն արդեն իսկ պատրաստ են եղել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ համապատասխան տեխնիկական բնութագրերով: Այս ամենում համոզվելու համար կարող է Ձեր կողմից լիազորված ներկայացուցիչը այցելել մեր արտադրամաս և համոզվել, որ բոլոր ապրանքները պատրաստ են և համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:

Կից ներկայացնում ենք ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով հրավերում նշված հեռախոսահամարին կատարված զանգերի քաղվածքը, ինչպես նաև ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով ընթացակարգի արդյունքում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից շահած 1, 3, 5, 7 և 8-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների լուսանկարները:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՍՑ-ՆԳ-2022/241 ծածկագրով նախաձեռնված ընթացակարգը մերժել և «Ֆոտոն» ՍՊԸ-ին չներառել ցուցակում»:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/241 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2022թ. թիվ 39/02-

15-331 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ. ապրիլի 28-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 1-ին աշխատանքային օրը՝ 18.04.2022թ.-ին, «Ֆոտոն» ՍՊԸ-ին eauction համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում (ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում) վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ Պատվիրատուին չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) պարբերությամբ սահմանված պահանջները՝ գնահատող հանձնաժողովը «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով մերժել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված պահանջի համաձայն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկվում է Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանկ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/241 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/241 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/241 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 07.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ֆոտոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ, չի ներկայացրել Պատվիրատուին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8878-2022 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 06.05.2022թ. թիվ 39/02-15-331 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 07.04.2022թ.նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ֆոտոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ, չի ներկայացրել Պատվիրատուին:

Այսպիսով՝ Ընկերությունը պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ, Պատվիրատուին չներկայացնելու վերաբերյալ մասնավորապես հայտնել է հետևյալը.

««Ֆոտոն» ՍՊԸ-ն փորձել է կապ հաստատել մետրոպոլիտենի գնումների համակարգողի հետ, որպեսզի կարողանա ուղեկցող գրությամբ առձեռն ներկայացնի որակավորման և պայմանագրի ապահովման տուժանքները, քանի որ այդպես է սահմանված հրավերով: Ինչու է փորձել կապ հաստատել, այնուհետև նոր ներկայացնել փաստաթղթերը, քանի որ պայմանագրում նշված չի եղել, որ Գևորգ Ավետիսյանը հանդիսանում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ, որպեսզի ուղեկցող գրությանը մեջ ներառվեր, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ունի անվտանգության պահակակետ և առանց համապատասխան թույլտվության ոչ ոք իրավունք չունի մուտք մոտրոպոլիտենի ադմինիստրատիվ մասնաշենք, այդ իսկ պատճառով է ընկերությունը փորձել կապնվել համակարգողի հետ: Սակայն հրավերում նշված հեռախոսահամարով 060460101(9807) հնարավոր չի եղել կապ հաստատել, քանի որ զանգերին պատասխանել է «ինքնապատասխանիչը», որի պատասխանը լսվել է 16-25 վայրկյանի ընթացքում, որը հստակ երևում է պայմանագրի ներկայացման համար սահմանված ժամկետում՝ 19.04.2022թ.-02.05.2022թ.–ն կատարված զանգերի քաղվածքներում:

Հավելում ենք, որ, «Ֆոտոն» ՍՊԸ-ն մասնակցելով ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով էլ. աճուրդին, մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն՝ 1, 3, 5, 7 և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող, և մինչև պայմանագրի ներկայացնելն արդեն իսկ պատրաստ են եղել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ համապատասխան տեխնիկական բնութագրերով:...

Կից ներկայացնում ենք ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով հրավերում նշված հեռախոսահամարին կատարված զանգերի քաղվածքը, ինչպես նաև ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով ընթացակարգի արդյունքում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից շահած 1, 3, 5, 7 և 8-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների լուսանկարները»:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքն, որ ««Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ունի անվտանգության պահակակետ և առանց համապատասխան թույլտվության ոչ ոք իրավունք չունի մուտք գործելու Պատվիրատուի ադմինիստրատիվ մասնաշենք և ուսումնասիրելով Ընկերության կողմից Ընթացակարգի հրավերում նշված հեռախոսահամարին կատարված զանգերի քաղվածքն, արձանագրում եմ, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն ձեռնարկել է իրենից կախված հնարավոր միջոցները՝ Պատվիրատուի հետ կապ հաստատելու և վերջինիս պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետում փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ, ներկայացնելու համար, սակայն վերջինիս չի հաջողվել, քանի որ Ընկերության զանգերը մնացել են անպատասխան:

Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից թույլ տրված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտման փաստը, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8878-2022 գրությամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**